ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

Համարը	N 1782-Ն	*Տեսակը*	Հիմնական
Տիպը	Որոշում	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	Միասնական կայք 2024.11.11-2024.11.24 Պաշտոնական հրապարակման օրը 15.11.2024	*Ընդունման վայրը*	Երևան
Ընդունող մարմինը	ՀՀ կառավարություն	*Ընդունման ամսաթիվը*	15.11.2024
Ստորագրող մարմինը	ՀՀ վարչապետ	*Ստորագրման ամսաթիվը*	15.11.2024
Վավերացնող մարմինը		*Վավերացման ամսաթիվը*	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	01.01.2027	*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

Ծանուցում

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2027 թվականի հունվարի 1-ից:

Կապեր այլ փաստաթղթերի հետ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՈՐԱԿԻ ՆՈՐՄԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 նոյեմբերի 2024 թվականի N 1782-Ն

ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՈՐԱԿԻ ՆՈՐՄԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի 70.1-ին հոդվածի 2-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Սահմանել ստորերկրյա ջրային մարմինների որակի նորմերը՝ համաձայն հավելվածի:
2. Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարին՝

1) սույն որոշման հավելվածով սահմանված ստորերկրյա ջրային մարմինների որակի նորմերը հաշվի առնել ստորերկրյա ջրային մարմինների կարգավիճակի գնահատման և որակի բարելավման համար՝ դրանք ներառելով ջրավազանային կառավարման պլաններում.

2) սույն որոշման հավելվածով սահմանված ստորերկրյա ջրային մարմինների որակի նորմերի թարմացման ժամանակ հաշվի առնել այդ ժամանակահատվածում ջրային ռեսուրսի որակի մոնիթորինգային տվյալների ավելացումը և քիմիական ցուցանիշների կոնցենտրացիաների արժեքները:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2027 թվականի հունվարի 1-ից:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

Ն. Փաշինյան

Երևան

15.11.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հավելված
ՀՀ կառավարության 2024 թվականի
նոյեմբերի 15-ի N 1782-Ն որոշման

ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՈՐԱԿԻ ՆՈՐՄԵՐ

1. Սույն հավելվածով սահմանվում են ստորերկրյա ջրային մարմինների որակի նորմերը և դրանց հիման վրա ստորերկրյա ջրային մարմինների կարգավիճակները:

2. Ստորերկրյա ջրային մարմինների լավ և վատ կարգավիճակները գնահատվում են՝ հիմնվելով ստորերկրյա ջրերի քիմիական և քանակական ցուցանիշների վրա:

3. Ստորերկրյա ջրային մարմինների լավ և վատ կարգավիճակներն ըստ քիմիական ցուցանիշների որոշվում են՝ հիմնվելով քիմիական ցուցանիշի կոնցենտրացիայի արժեքի վրա:

4. Ստորերկրյա ջրային մարմինների կարգավիճակը գնահատվում է լավ, եթե ջրի որակի քիմիական ցուցանիշները գնահատվել են լավ, և ստորերկրյա ջրային մարմնի կարգավիճակը գնահատվում է վատ, եթե ջրի որակի քիմիական ցուցանիշներից որևէ մեկը գնահատվել է վատ:

5. Ստորերկրյա ջրային մարմինների կարգավիճակը և որակի նորմերը՝ ըստ քիմիական ցուցանիշների ներկայացված են N 1 աղյուսակում:

Աղյուսակ N 1

ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ԵՎ ՈՐԱԿԻ ՆՈՐՄԵՐԸ՝ ԸՍՏ ՔԻՄԻԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ

ՀՀ	Ցուցանիշներ	Ստորերկրյա ջրային մարմինների լավ կարգավիճակ	Ստորերկրյա ջրային մարմինների վատ կարգավիճակ	Չափման միավոր
		Ջրի որակի նորմ		
1.	Ընդհանուր հանքայնացում	≤1000	>1000	մգ/լ
2.	Տեսակարար էլեկտրահաղորդականություն	≤1900	>1900	մկՍմ/սմ
3.	pH	≥6.5 ≤9.5	≤6.5 ≥9.5	-
4.	Կոշտություն	≤7	>7	մմոլ/լ
5.	Սուլֆատ իոն	≤190	>190	մգ/լ
6.	Քլորիդ իոն	≤190	>190	մգ/լ
7.	Նատրիում	≤150	>150	մգ/լ
8.	Նիտրատ իոն	≤40	>40	մգ/լ
9.	Նիտրիտ իոն	≤0.4	>0.4	մգ/լ
10.	Ամոնիում իոն	≤0.4	>0.4	մգ/լ
11.	Ֆոսֆատ իոն	≤0.3	>0.3	մգ/լ
12.	Պղինձ	≤0.1	>0.1	մգ/լ
13.	Ցինկ	≤0.1	>0.1	մգ/լ
14.	Քրոմ	≤40	>40	մկգ/լ
15.	Արսեն	≤10	>10	մկգ/լ
16.	Կադմիում	≤4.0	>4.0	մկգ/լ
17.	Կապար	≤7.2	>7.2	մկգ/լ

18.	Նիկել	≤20	>20	մկգ/լ
19.	Ծարիր	≤8.0	>8.0	մկգ/լ
20.	Սելեն	≤15	>15	մկգ/լ
21.	Մոլիբդեն	≤40	>40	մկգ/լ
22.	Բոր	≤1.3	>1.3	մգ/լ
23.	Ֆտորիդ իոն	≤1.3	>1.3	մգ/լ
24.	Ալյումին	≤0.2	>0.2	մգ/լ
25.	Երկաթ	≤0.2	>0.2	մգ/լ
26.	Մանգան	≤0.04	>0.04	մգ/լ
27.	Մնդիկ	≤0.8	>0.8	մկգ/լ
28.	Ցիանիդ իոն	≤0.04	>0.04	մգ/լ
29.	Բենզոլ	≤1.0	>1.0	մկգ/լ
30.	Բենզապիրեն	≤0.01	>0.01	մկգ/լ
31.	Պեստիցիդներ, ընդհանուր	≤0.5	>0.5	մկգ/լ
32.	Ալդրին	≤0.03	>0.03	մկգ/լ
33.	Դիէլդրին	≤0.03	>0.03	մկգ/լ
34.	Հեպտաքլոր	≤0.03	>0.03	մկգ/լ
35.	Հեպտաքլոր էպօքսիդ	≤0.03	>0.03	մկգ/լ
36.	Պոլիցիկլիկ արոմատիկ ածխաջրածիններ, ընդհանուր	≤0.08	>0.08	մկգ/լ
37.	Եռքլորէթիլեն և երկքլորէթիլեն	≤7.5	>7.5	մկգ/լ
38.	1,2-երկքլոր էթան	≤2.25	>2.25	մկգ/լ
39.	Եռհալոմեթաններ, ընդհանուր (գումարային քլորոֆորմ, բրոմոֆորմ, երկբրոմքլորմեթան և բրոմերկքլորմեթան)	≤75	>75	մկգ/լ
40.	Հալոքացախաթթուներ	≤45	>45	մկգ/լ
41.	Էպիքլորոհիդրին	≤0.08	>0.08	մկգ/լ
42.	Ածխաջրածնային ինդեքս	≤75	>75	մկգ/լ
43.	Քլորիտ իոն	≤0.2	>0.2	մգ/լ
44.	Քլորատ իոն	≤0.2	>0.2	մգ/լ
45.	Բրոմատ իոն	≤0.01	>0.01	մգ/լ

6. Ստորերկրյա ջրային մարմինների լավ և վատ կարգավիճակներն ըստ քանակական ցուցանիշների սահմանվում են՝ հիմնվելով ջրավազանային կառավարման պլաններով սահմանված ջրային մարմինների օգտագործելի ջրային ռեսուրսի ծավալի վրա:

7. Ստորերկրյա ջրային մարմնի կարգավիճակը գնահատվում է լավ, եթե միջին տարեկան ջրառի ծավալը (մլն.մ^3/տարի) չի գերազանցում ջրային մարմնի օգտագործելի ջրային ռեսուրսի ծավալի 95 տոկոսը:

8. Ստորերկրյա ջրային մարմնի կարգավիճակը գնահատվում է վատ, եթե միջին տարեկան ջրառի ծավալը (մլն.մ^3/տարի) գերազանցում է ջրային մարմնի օգտագործելի ջրային ռեսուրսի ծավալի 95 տոկոսը:

9. Ստորերկրյա ջրային մարմինների կարգավիճակի գնահատումն իրականացվում է ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմնի կողմից՝ հիմնվելով ստորերկրյա ջրերի քիմիական, քանակական ցուցանիշների և մոնիթորինգային տվյալների վիճակագրական վերլուծության վրա:

Հայաստանի Հանրապետության
վարչապետի աշխատակազմի
ղեկավար

Ա. Հարությունյան

15.11.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Պաշտոնական հրապարակման օրը՝ 15 նոյեմբերի 2024 թվական: